# Վկայութիւնք

«Բանասէրի» նկատմամբ հրատարակուած համակրական խօսքերէն հետեւեալները կը քաղենք միայն, զանց ընելով սիրելի քաղաքերական բազմաթիւ նամակներն ու զանազան լրագրաց վկայութիւնները.

«...Բանասէրը կը փութայ իր ամէն ազնիւ բաժանորդաց ուշադրութիւնն հրաւիրելու այս ի լոյս գալիք թերթին վրայ, որ իր տեսակէտով եւ ըստ ծրագրին խոստմանց հայ գրականութեան մեծ պակասներէն մին պիտի լրացնէ: Նորա հեղինակն իր պատուաբեր յօդուածներով ի Բազմավէպի եւ Հանդ. Ամսօրեայի արդէն իսկ ծանօթ գրիչ մ'է, որուն մեր գրականութեան զարգացման մեծ աջողակ մը լինելուն վրայ երաշխաւոր ենք, միայն թէ ազգը նիւթապէս առոր օգնելը չզլանայ: Մեր նուիրատու ազնիւ ազգայիններէն, այսպիսի անխոնջ և արդիւնաւոր հայ գրագէտի մը եթէ բարերար ձեռքով օգնութեան հասնին, իրենց լուման արգասաւոր ըլլալուն վրայ ամենեւին չենք տարակուսիր»

ԲԱԶՄԱՎԷՊ, 1899 Մայիս, էջ 140-41:

«Այնչափ աւելի մեծ ուրախութեամբ ողջունեցինք «Բանասէրի» ծնունդը աւետող ծանուցումէն, որչափ մինչեւ հիմայ կրնանք ըսել՝ նոյն ուղղութիւնն բռնող պարբերական մ'ունեցած չենք: Այո, ունեցանք հայ մամուլին լեզուաբանութեան մէջ, նաև քննադատին մէջ՝ իր ներկայացուցիչն. բայց չունեցանք ցայժմ զուտ հնախօսական-պատմական-լեզուաբանական-քննական թերթ մը: Այս պակասն ահա պիտի լեցնէ «Բանասէրը»... Ահա նաև գործունէութիւն մը, որ ... հանդերձ մանագիտական ... իր բազմակողմանիութեամբ, առաւելս չունինք՝ պիտի գոհացնէ լիովին իր ընթերցողներն: Բանասէրեան տարիներ ի վեր գրական հրապարակը կը գտնուի գրելով այլեայլ թերթերու մէջ բազմահմուտ ուսումնասիրութիւններ, ըստ այսմ ծանօթ անձնաւորութիւն մըն է ուսումնական աշխարհին, բայց «Բանասէրին» աւելի երաշխաւորութիւն տուողն է խմբագրին բեւեռագրութեանց՝ մանաւանդ տուփեաններուն եւ լեզուագիտութեան մասին անուանած խորունկ հմտութիւնն:»

ՀԱՆԴ. ԱՄՍՕՐԵԱՅ, 1899 Մայիս, էջ 91-92: